«ԲԼԵՋԱՆ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ,ՍՈՑԻԱԼԱԿԱՆ,
ԲԻԶՆԵՍԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԿ

"BLEJAN"
ECOLOGICAL, SOCIAL, BUSINESS
SUPPORT NGO

ԲԼ–Գ–008 09.09.2020

ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Ռոմանոս Պետրոսյանին

Հարգելի պարոն Պետրոսյան
Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրությունը, ՀՀ կողմից վավերացրած Օրհուսի համաձայնագրը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքը՝ որպես պատասխանատու մարմին, խնդրում եմ տրամադրել Սևանա լճի հետ կապված պաշտոնական տեղեկատվություն. («Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի ընդունման տարվանից սկսած(14.12.2001))՝ մինչև 01.09.2020թ.-ը ժամանակահատվածի համար.

- ✓ բոլոր նորմատիվ ակտերը
- ✓ ընթացակարգերը
- ✓ արձանագրությունները
- ✓ 25.12.2008թ.-ից ստեղծված Սևանա լճի փորձագիտական հանձնաժողովի կողմից կազմած արձանագրությունները, առաջարկները, լուծումները:

Խնդրում եմ միաժամանակ տրամադրել տեղեկատվություն, թե Սևանա լճին առնչվող ՀՀ-ԵՄ-Եվրատոմ-ի միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA) ինչ գործողություններ են նախատեսված, ինչ է արված և ինչ է արվում (նշել ժամկետները, ֆինանսական աղբյուրը, կատարողներին և պատասխանատուներին):

Խնդրում եմ հնարավորության դեպքում տեղեկատվությունը տրամադրել թղթային կամ էլեկտրոնային տարբերակով, եթե ոչ, ապա նշել բոլոր փաստաթղթերի ընդունող մարմինները, ընդունման տարիները, համարները և թե որտեղի±ց կարող ենք այն ստանալ կամ ներբեռնել (տրամադրել հղումները):

Թղթային տարբերակները ստանալու համար պատրաստ ենք վճարել, եթե էջերի թիվը գերազանցում է օրենքով պահանջվածը:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան է տրվում այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30օրյա ժամկետ): Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու մեր հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում: Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող ենք ուղղել հարցումը:

Կանխավ շնորհակալ եմ:

Հարգանքով՝

ՀԿ նախագահ՝ Լիաննա Ասոյան

**Հասցե.** ՀՀ, ք. Գավառ, Դաշտոյան 1/16 բնակարան, տուն 16
**Հեռ.** (0264) 2-11-57, բջջ. (077) 76 46 41
**Web:** www.blejan.org

**Address.**RA, Gegharkunik marz, Gavar, Dashtoyan st.1/16
**Tel.:** +374 264 2 11 57, mob: +374 77 76 46 41
**E-mail:** info@blejan.org blejanli@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ 5/07.2/10460
«22» «09» 2020թ.

«Բլեջան» բնապահպանական, սոցիալական,
բիզնեսի աջակցության ՀԿ-ի
նախագահ Լ.Ասոյանին

Հարգելի տիկին Ասոյան

Ի պատասխան Ձեր 2020թ. սեպտեմբերի 9-ի ԲԼ-Գ-008 գրության՝ ներկայացնում եմ Սևանա լճի վերաբերյալ նորմատիվ իրավական ակտերի ցանկը.

- «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք,
- «Սևանա լճի մասին» ՀՀ օրենք,
- «Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման և օգտագործման միջոցառումների տարեկան ու համալիր ծրագրերը հաստատելու մասին» ՀՀ օրենք,
- ՀՀ կառավարության «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին» 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշում,
- «Սևան» ազգային պարկ» պետական հիմնարկը վերակազմակերպելու, «Սևան» ազգային պարկի և «Սևան» ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունները հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2002 թվականի մայիսի 30-ի N 927-Ն որոշում,
- «Սևան» ազգային պարկի և դրան հարող տարածքներում հողամասերի վարձակալության, կառուցապատման իրավունքի տրամադրման և քաղաքաշինական գործունեության իրականացման մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1563-Ն որոշում,
- «Սևան» ազգային պարկի հողամասերն անհատույց օգտագործման հանձնելու վերաբերյալ պայմանագրերի մասին» ՀՀ կառավարության 2009 թվականի դեկտեմբերի 10-ի N 1438-Ն որոշում,
- «Բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով միջգերատեսչական մրցութային հանձնաժողով ստեղծելու և միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի աշխատակարգը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
0010, ք.Երևան, Հանրապետությանհր., Կառավարականտուն 3
10010608@e-citizen.am |minenv@env.am | www.env.am
հեռ. +374 11 818520 | ֆաքս՝ +37411 818506

հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2008 թվականի դեկտեմբերի 18-ի N 1578-Ն որոշում,

- «Սևան» ազգային պարկի 1908.0 մետր բացարձակ նիշից ցածր տարածքներում հողամասերի վարձակալության և կառուցապատման իրավունքի տրամադրման առանձնահատկությունների և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի մայիսի 12-ի N 927-ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության մայիսի 13-ի 2004 թվականի N 766-Ն որոշում,
- «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային լողափերի կազմակերպման և Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարությանը գումար հատկացնելու մասին» ՀՀ կառավարության N 2011 թվականի ապրիլի 28-ի N 527-Ն որոշում,
- «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային լողափի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2015 թվականի հոկտեմբերի 1-ի N 1122-Ն որոշում,
- «Սևան» ազգային պարկի ռեկրեացիոն գոտում հանրային լողափերի կազմակերպման մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի հունիսի 7-ի N 752-Ն որոշում:
- «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի և ֆիզիկական անձանց միջև անտառտնկարկների մաքրման նպատակով կնքվող պայմանագրերում անհատելիության վերաբերյալ դրույթների նախատեսման, «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի համար բնօգտագործման վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2014 թվականի ապրիլի 3-ի N 359-Ն որոշում:
- «Սևանա լճի ափամերձ տարածքներում քաղաքաշինական գործունեության կանոնակարգման միջոցառումների մասին» ՀՀ կառավարության 2006 թվականի սեպտեմբերի 14-ի N 1386-Ն որոշում,
- ՀՀ կառավարության 2011թ. ապրիլի 28-ի N527-L, 2012թ. հունիսի 7-ի N 752-L, 2015թ. հոկտեմբերի 1-ի N 1122-L որոշումներով «Սևան» ազգային պարկի տարածքում ստեղծվել է 8 հանրային լողափ,
- «Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների վերականգնման, պահպանման, վերարտադրման, ինչպես նաև դրանց պաշարների որոշման, ձկան և խեցգետնի արդյունագործական որսի քանակների, ձևերի և կազմակերպման կարգը սահմանելու մասին» Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N 1667-Ն որոշում,
- «2020թ. Սևանա լճի էկոհամակարգի վերականգնման, պահպանման, վերարտադրման, բնականոն զարգացման և օգտագործման

միջոցառումների» Կառավարության 2019թ. սեպտեմբերի 30-ի N1293-L որոշում,

- «Կառավարության 2019 թվականի սեպտեմբերի 30-ի N 1293-L որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Կառավարության 2020 թվականի օգոստոս-ի 27-ի N 1421-L որոշում:

ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի նիստերի բոլոր արձանագրություններն ստանալու համար անհրաժեշտ է դիմել ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովին:

ՀՀ-ԵՄ Եվրատոմ-ի միջև կնքված համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA) Սևանա լճին առնչվող գործողություններ նախատեսված չեն:

9/22/2020

X

ԳՐԻԳՈՐ ԳՈՒԼՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: GULYAN GRIGOR 3202780018

Գ. Գուլյան

ՀՀԿԲ
Ա.Սուքիասյան
011-818-559